

Վարող բժշկի կամ բժշկական հիմնարկի տվյալներ

Բժշկի ԱԱՀ _____

Հասցե _____

Հեռախոս _____

Անհետաձգելի իրավիճակների համար տեղեկատվություն

Անհետաձգելի իրավիճակի դեպքում կապվեք հարազատ(ներ)ի կամ հետևյալ անձի հետ՝

Անուն _____

Հեռախոս _____

Անուն _____

Հեռախոս _____

Պացիենտի համար հրահանգներ

- Վիտամին K-ի հակազդիչ չհանդիսացող ՆՌ ԱնտիԿոագուլյանտները (ՆՈԱԿ) “ջրիկացնում են” արյունն ու նվազեցնում վտանգավոր մակարդուկների առաջացման ռիսկը:
- Դեղամիջոցը չընդունելու դեպքում Դուք պաշտպանված չեք:
- Ընդունեք դեղամիջոցն այնպես ինչպես այն նշանակված է (օրը 1 կամ 2 անգամ):
- Մակարդուկներից և ինսուլտից առավելագույնս պաշտպանված լինելու համար բաց մի թողեք որևէ դեղաչափ:
- Առանց Ձեր բժշկի հետ խորհրդակցելու մի դադարեցրեք դեղամիջոցի ընդունումը:
- Վնասվածքի կամ արյունահոսության դեպքում խորհրդակցեք Ձեր բժշկի հետ՝ բուժման հետագա պլանի համար:
- Առանց Ձեր բժշկի հետ խորհրդակցելու մի սկսեք այլ դեղամիջոց ընդունել նույնիսկ առանց դեղատոմսի վաճառվող ցավազրկոցների:
- Միջամտությունից առաջ ՆՈԱԿ-ի մասին տեղեկացրեք ատամնաբույժին, վիրաբույժին, բժշկին:

Վարերը է մշտապես Ձեզ հետ կրել այս քարտը: Ցույց տվեք այն Ձեզնով զբաղվող բժիշկին, ատամնաբույժին, դեղագետին, այլ բուժաշխատողներին:

Հաճախակի տրվող հարցեր

- Ե՞րբ պետք է կապվել բուժաշխատողի հետ?**
Հակամակարդիչի առավել տարածված կողմնակի ազդեցությունը արյունահոսությունն է: Մակայն, ինսուլտի ռիսկի նվազեցումը արյունահոսության ռիսկի նվազումով գերակշռում է: Կապվեք Ձեր բուժաշխատողի հետ եթե ունեք արյունահոսության նշաններ/ ախտանիշեր ինչպիսիք են:
- Արտաստվոր կապտուկներ, քթից կամ լնդերից արյունահոսություն, կտրվածքից դժվարության դադարող արյունահոսություն:
 - Մովորականից առատ դաշտանային արտադրություն կամ հեշտոցից արյունահոսություն
 - Արյուն մեզում, կարմիր կամ սև կղանք
 - Արյունախառը փսխում կամ հագ
 - Գլխապտույտ, դժգոխություն, թուլություն:

Ի՞նչ անել, եթե բաց եմ թողել դեղամիջոցի ընդունումը
Ընդունեք այն հիմա, եթե բաց թողնված ընդունման ժամից անցել է ավելի քիչ ժամանակ քան մնացել է մինչև հաջորդ ընդունումը:

Ի՞նչ անել, եթե պատահաբար ընդունել եմ կրկնակի դեղաչափ?
• Օրն երկու անգամ ՆՈԱԿ՝ բաց թողեք հաջորդ ընդունման ժամը և վերսկսեք դեղամիջոցը 24 ժ անց
• Օրը մեկ անգամ ՆՈԱԿ՝ ընդունեք հաջորդ դեղաչափը պլանավորված ժամին:

Բուժաշխատողների համար տեղեկություններ

- ՆՈԱԿը գործում է որպես թրոմբոզի նույնիսկ ինհիբիտոր (դաբիգատրան) կամ Ջա գործոնի նույնիսկ ինհիբիտոր (ապիքսաբան, էդոքսաբան, ռիվարոքսաբան):
- Ստուգեք ՆՈԱԿԻ հակացուցումները՝ մեխանիկական սրտային փական; միտրալ փականի ռեմատիկ նեղացում; ծանր երիկամային անբավարարություն:
- Ստանդարտ լաբորատոր քննությունները (INR, PT կամ aPTT) ՆՈԱԿ-ով անտիկոագուլյացիայի քանակական գնահատական չեն:
- Խոշոր արյունահոսության դեպքում պետք է անհապաղորեն դադարեցնել ՆՈԱԿ-ը:
- Որոշ միջամտություններից առաջ պետք է դադարեցնել ՆՈԱԿ-ը (տե՛ս ժամկետները ՆՈԱԿ-ների վեբաբեռյալ պրակտիկ ուղեցույցում)

Ի՞նչ է պետք ստուգել պացիենտի յուրաքանչյուր այցի ժամանակ

- Պարտաճանաչ ընդունումը (պացիենտը պետք է բերի մնացած հաբերը)
- Թրոմբոլիտիկ պատահարները
- Արյունահոսության դեպքերը
- Այլ կողմնակի ազդեցությունները
- Համատեղ ընդունվող դեղորայքը (այդ թվում՝ առանց դեղատոմսի վաճառվող)
- Արյան քննության անհրաժեշտությունը
- Փոփոխման ենթակա ռիսկի գործոնները
- ՆՈԱԿ-ի և դեղաչափի օպտիմալ ընտրությունը

(Տես ավելին՝ www.NOACforAF.eu կայքում)

Համատեղ ընդունվող դեղորայք

Անվանում	Դեղաչափ

Համատեղ ընդունվող անտիագրեգանտ(ներ)ը՝ տեսակը, ցուցումները, սկսելու և ավարտելու ժամկետները:

Բուժաշխատողների համար տեղեկություններ Արյան քննության հսկողությունը

- Անտիկոագուլյացիայի մակարդակի պարբերական որոշման անհրաժեշտություն չկա
- Տարեկան հեմոգլոբին, լյարդի և երիկամների ֆունկցիա
- ≥ 75 տ. կամ հյուծված պացիենտի դեպքում (հատկապես դաբիգատրանի կամ էդոքսաբան պարագայում) երիկամային ֆունկցիան 6 ամիսը մեկ
- Եթե կրեատինինի քլիրենսը ≤ 60 մլ/ր՝ ստուգեք «CrCl:10» ամիս ինտերվալով (օրինակ՝ 4 ամիսը մեկ, եթե CrCl = 40)
- Եթե կա երիկամների և/կամ լյարդի վրա ազդող ուղեկցող վիճակ ստուգեք դրանց ֆունկցիան

Ամսաթիվ	կրեատ.	CrCl	հեմոգլոբին	լյարդի ֆերմ.

Պլանային և չպլանավորված այցեր

Ամսաթիվը, հիմնարկը, մասնագետը, այցի նպատակը, արդյունքը / պլանները

Նախասրտերի շողացման օրալ անտիկոագուլյացիայի քարտ՝ վիտամին K-ի հակազդիչ չհանդիսացող նոր անտիկոագուլյանտների (ՆՈԱԿ) համար

Պացիենտի ԱԱՀ _____

Ծննդյան ամսաթիվ _____

Հասցե _____

ՆՈԱԿ-ը _____

Դեղաչափը _____

Ընդունման ժամ(եր)ը _____

Ուտելիքի հետ / առանց _____

Բուժումը սկսված է _____

